ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2015թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 37 ՇԵՆՔԻ Հ. 73 ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2015 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 270-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ. 37 շենքի հ. 73՝ 112.8 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման հ. 08012014-01-0183 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Հայկ Բալյանին, Շուշանիկ Սարդարյանին, Վահան Բալյանին, Էլիզա Բալյանին, Հրայր Բալյանին, Հովսեփ Բալյանին և Մովսես Բալյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

§ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 37 ՇԵՆՔԻ Հ. 73 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ¦ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Մարգարյան փողոցի հ.37 շենքի հ. 73՝ 112.8 քմ մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայկ Բալյանի ընտանիքին:

Հայկ Բալյանը և վերջինիս կինը՝ Շուշանիկ Սարդարյանը, չնայած իրենց երիտասարդ տարիքի, կազմել են բազմազավակ ընտանիք և ունեն հինգ անչափահաս երեխաներ՝ չորս տղա և մեկ աղջիկ: Այս ընտանիքը բնակվում է այլ ազգականների հետ միասին, Հայկ Բալյանի հայրիկի՝ Վահան Բալյանի սեփականությունը հանդիսացող Ավանեսովի 2-րդ նրբանցքի հ. 2 շենքի հ. 31 հասցեում գտնվող 35.4 քմ բնակելի մակերես ունեցող 2 սենյականոց բնակարանում:

Այս բազմանդամ ընտանիքը մշտապես ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Հայաստանի Հանրապետությունում անցկացվող մարզական-մասսայական ծրագրերին և արժանանում տարբեր պատվոգրերի և շնորհակալագրերի: Բալյաններին 2013 թվականին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում շնորհվել է «Լավագույն մարզական ընտանիք» վկայագիրը:

Վերջիններս վառ օրինակ են ծառայում սպորտային ապրելակերպի փայլուն դրսևորման, ինչպես նաև առողջ ընտանիքի ձևավորման քարոզման հարցում:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման ղեկավարի 13.01.2015թ. հ. ԿԽ-2/9077, 9078 գրությունների համաձայն՝ Հայկ Բալյանի և Շուշանիկ Սարդարյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև վերջին հինգ տարիների ընթացքում վերջիներիս կողմից որևէ անշարժ գույքի օտարում և ձեռքբերում չի կատարվել:

Բալյանների ընտանիքը մշտապես բնակվելով Երևանում, ցավոք, ունի բնակարանային պայմանների խիստ կարիքավորություն:

Հաշվի առնելով նշվածը մշակվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 37 ՇԵՆՔԻ Հ. 73 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 37 ՇԵՆՔԻ Հ. 73 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ